<p><b>Լրջության աստիճան Գ</b></p> <p>Նվազագույն ազդեցություն աշխատանքի վրա.</p> <ul style="list-style-type: none"> <li>Աշխատանքները հիմնականում կարող են շարունակվել նվազագույն խոչընդոտներով կամ առանց խոչընդոտների</li> <li>Պահանջում է ուշադրություն չորս աշխատանքային ժամվա ընթացքում<sup>5</sup></li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Արձագանք առաջին կանչին չորս ժամվա ընթացքում կամ ավելի վաղ</li> <li>Ջանքերի գործադրում միայն աշխատանքային ժամերի ընթացքում<sup>5</sup></li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Միջադեպը արձանագրած անձի կոնսուլտային տվյալները</li> <li>Արձագանք 24 ժամվա ընթացքում</li> <li>Ներկայացվում են հեռախոսի կամ կայքի միջոցով</li> </ul>

<sup>1</sup> Կրիտիկական իրավիճակների մեներգերը այն մարդիկ են, որոնք հատուկ նշանակվել են խնդրի շուտափույթ լուծմանն աջակցելու համար՝ համապատասխան ներգրավվածության, մոբիլիզացիայի, ռեսուրսների ներգրավման և համակարգման միջոցով:

<sup>2</sup> Մենք, հնարավոր է, ստիպված լինենք նվազեցնել լրջության աստիճանը, եթե դուք չտրամադրեք համապատասխան ռեսուրսներ կամ համապատասխան արձագանք չտաք, որպեսզի մենք հնարավորություն ունենանք շարունակել խնդրի լուծմանն ուղղված աշխատանքները:

<sup>3</sup> Առցանց ծառայությունների աջակցման հարցումները կարող են ներկայացնել առցանց ծառայությունների աջակցման համար նախատեսված կայքէջերի միջոցով:

<sup>4</sup> Բ կարգի լրջության աստիճանի խնդիրների համար շաբաթը 7 օր, 24 ժամյա աջակցումը մատչելի չէ բոլոր երկրներում: Մանրամասների համար խորհրդակցեք ձեր SDM-ի հետ:

<sup>5</sup> Աշխատանքային ժամերը սովորաբար 09:00-ից 17:30 են Տեղական ստանդարտ ժամանակով՝ չհաշված տոները և շաբաթ, կիրակի օրերը: Աշխատանքային ժամերը ձեր երկրում կարող են մի փոքր տարբերվել:

➤ **Աջակցություն տեղում.** Տեղում իրականացվող փոխազդող աջակցությունը տրամադրում է օգնություն ձեր իսկ տեղադրությունում: Այս ծառայությունը կախված է Microsoft-ի ռեսուրսների առկայությունից և կարող է լրացուցիչ վճարներ պահանջել ամեն մի այցելության համար:

➤ **Մշակման հարցերով աջակցություն.** Ստեղծում է մշակում է գործադիրներ Microsoft-ի տեխնոլոգիաների ներկառուցմամբ Microsoft-ի հենքի վրա, մասնագիտանալով Microsoft-ի մշակման գործիքների և տեխնոլոգիաների վրա և վաճառվում է ժամանաքանակով՝ նշված ձեր Աշխատանքի պատվերի մեջ:

➤ **Խորհրդատվական ծառայություններ.** Հեռախոսով մատուցվող աջակցման ծառայություններ, որոնք ապահովում են աջակցություն կարճաժամկետ (սովորաբար՝ վեց ժամ կամ ավելի քիչ տևող) և չպլանավորված հարցերի շուրջ՝ SS մասնագետների և մշակողների համար: Խորհրդատվական ծառայությունները կարող են ներառել խորհուրդներ, ընդհանուր կառավարում, խորքային պատճառի վերլուծություն և գիտելիքների փոխանցում, որոնց նպատակն է օգնել ձեզ իրագործել Microsoft-ի տեխնոլոգիաները այնպիսի եղանակով, որը թույլ կտա խուսափել աջակցության ընդհանուր խնդիրներից և նվազեցնել համակարգի խափանումների հավանականությունը: Խորհրդատվական ծառայությունները վաճառվում են ժամաքանակով՝ նշված ձեր Աշխատանքի պատվերի մեջ:

## 5.4 Բարելավված ծառայություններ

Այս բաժնում նկարագրված միավորները մատչելի են Պրեմիեր աջակցման փաթեթի մեջ որպես հավելվածներ, ընդլայնումներ և արդիականացումներ լրացուցիչ վճարի դիմաց:



### 5.4.1 Արագացված փաթեթներ

➤ **Արագացված փաթեթներ.** Կազմված է նախապես ընտրված Կանխարգելիչ ծառայություններից, որոնք նկարագրված են Բաժին 5.3.1-ում տրամադրվում են հաջորդականությամբ՝ հաճախորդի բիզնես նպատակներին հասնելու համար: Հատուկ փաթեթների մեջ ընդգրկված ծառայությունների և նրանց մատուցման հաջորդականության մասին մանրամասները կարող եք գտնել ձեր Ծառայությունները մատուցող կառավարիչի մոտ: Յուրաքանչյուր արագացված փաթեթ ներառում է ծառայությունների ներածություն՝ ըստ որի կարելի է.

- Սահմանել հաջողության չափանիշը և մատուցման ժամկետը
- Նշել թիրախային միջավայրը
- Ներկայացնել նշանակությունը և պարտավորությունները
- Քննարկել կանխարգելիչ ծառայությունները, որոնք պետք է մատուցվեն

### 5.4.2 Աջակցության համար նախատեսված ինժեներական ծառայություններ

➤ **Աջակցության համար նախատեսված ինժեներական ծառայություններ (DSE).** Կանխարգելիչ օգնություն, որը մատչելի է կանոնավոր աշխատանքային ժամերի ընթացքում՝ աջակցելու ձեր կողմից ընտրված Microsoft-ի որոշակի արտադրանքները և տեխնոլոգիաները, որոնք նշված են ձեր Աշխատանքի պատվերի մեջ: DSE ծառայությունները կարելի է գնել նախապես և ժամաքանակների կազմով, իսկ ժամերի օգտագործմանը զուգընթաց՝ նրանք կկրճատվեն ձեր հաշվից: DSE ռեսուրսները հատկացված, ըստ առաջնահերթության դասակարգված և նշանակված են աշխատանքների իրականացման մեկնարկի վերաբերյալ հանդիպման ժամանակ կողմերի միջև ձեռք բերված համաձայնությունների հիման վրա, որոնք գրանցվում են որպես ձեր Ծառայությունների մատուցման ծրագրի մի մաս: DSE ծառայությունները մատուցվում են աջակցման մեկ տեղադրության համար՝ ձեր Աշխատանքի պատվերի մեջ նշելով աջակցման տեղադրությունը:

DSE-ի կողմից մատուցվող ծառայությունների հիմնական շրջանակը հետևյալն է.

- Օգնել մշակել և իրագործել հնարավոր միջադեպերը կանխարգելելու ռազմավարություն և բարձրացնել ձեր կողմից կիրառված Microsoft-ի տեխնոլոգիաների հասանելիությունը:
- Օգնել պարզել կրկնվող միջադեպերի հիմքում ընկած խնդիրը և տրամադրել խորհուրդներ Microsoft-ի նշված տեխնոլոգիաների հետագա խափանումները կանխարգելելու վերաբերյալ:
- Կուտակել մանրամասն գիտելիքներ ձեր բիզնեսի ներկայիս և ապագա պահանջների, ինչպես նաև ձեր տեղեկատվական տեխնոլոգիաների միջավայրի կազմաձևի վերաբերյալ:
- Նախօրոք փաստաթղթավորել Պրեմիեր աջակցության ծառայությունների օգտագործմանը վերաբերող բոլոր առաքումները (օրինակ՝ աջակցության հնարավորության վերաբերյալ վերլուծությունները, ընդհանուր վիճակի ստուգումների, սեմինարների, ռիսկի գնահատման ծրագրերի իրականացման արդյունքները և այլն):
- Համապատասխանեցնել ձեր շահագործման գործունեությունը Microsoft-ի տեխնոլոգիաների ձեր ծրագրավորված և ընթացիկ իրագործման եղանակների հետ:
- Բարձրացնել ձեր աջակցության ծառայություններ մատուցող թիմի տեխնիկական և գործառնական հմտությունները:
- Նախաձեռնել և օժանդակել Microsoft-ի նշված տեխնոլոգիաների համար հաճախորդի հատուկ կարիքներին համապատասխանող փաստաթղթավորմանը՝ ձեր միջավայրի

կազմաձևմանը, վթարներից հետո համակարգի աշխատունակության վերականգնմանը, ցանցի տեղաբանությանը և այլնին աջակցելու համար:

### 5.4.3 Անհատական աջակցության ծառայություններ

➤ **Անհատական աջակցություն.** Անհատական աջակցությունը տրամադրում է սահմանափակ, շարունակական աջակցում հաշված քանակությամբ արտադրանքների և ծառայության փաթեթների համար, որոնք հասել են իրենց կենսունակության ավարտին՝ համաձայն Microsoft-ի Աջակցման քաղաքականության՝ <http://support.microsoft.com/lifecycle>: Արտադրանքները (և նրանց տարբերակները) և/կամ ծառայությունների փաթեթները, որոնց համար դուք վճարել եք, կնշանակվեն որպես Անհատական աջակցություն ձեր Աշխատանքի պատվերի մեջ:

Անհատական աջակցման համար գրանցման ծրագրի վճարները հաշվվում են այնպես, ինչպես, եթե առաջին օրվանից գրանցված կլինեիք Անհատական աջակցության ծրագրի մեջ (օր. եթե Windows Server 2003 SP2-ի համար Անհատական աջակցությունը մատչելի է դարձել 2015 թ.-ի հուլիսի 15-ից, բայց դուք չեք գրանցվել մինչև 2015 թ.-ի հոկտեմբերի 13-ը, ձեր ծրագրի վճարը հաշվարկվում է 2015 թ.-ի հուլիսի 15-ից): Անհատական աջակցության գրանցման վճարները չեն փոխհատուցվում և չեն փոխանցվում Անհատական ստանդարտ աջակցության և Անհատական հիմնական աջակցության միջև:

#### Ծառայության նախնական պայմաններ և սահմանափակումներ.

- Դուք պետք է ունենաք գործող Պրեմիեր համաձայնագիր՝ Խնդիրների լուծման աջակցման բավարար ժամերով՝ Անհատական աջակցության ծառայությունների հարցումը աջակցելու կամ շտկումների փաթեթի համար դիմելու համար: Եթե ձեր Պրեմիեր աջակցման համաձայնագիրը դադարեցված կամ ընդհատված է, Անհատական աջակցության ծառայությունը նույնպես կդադարեցվի նույն ամսաթվով:
- Դուք պետք է տեղադրեք և գործարկեք ամենավերջին ծառայության փաթեթը՝ ձեր Աշխատանքի պատվերի մեջ նշված արտադրանքների համար, մինչև Անհատական աջակցություն ստանալը:
- Գրանցված արտադրանքների համար Անհատական աջակցության ծրագրում մասնակցելու և անվտանգության տեղեկագրերը և արդիացումները մատչելու համար դուք պետք է տրամադրեք մանրակրկիտ միգրացիոն պլան՝ նշելով սարքերի/սմուշների քանակը, քառորդային կտրվածքով կատարվող աշխատանքային փուլը և միգրացիան ավարտելու ժամկետը: Եթե չտրամադրեք այս միգրացիոն պլանը, չեք կարող մատչել Անհատական աջակցման ծառայությունները:
- Անհատական աջակցության շրջանակներում «սարք» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ վիրտուալ սարք, որի վրա հաճախորդն ուզում է կատարել որոշակի արտադրանքի համար անվտանգության արդիացում: Սարքերի քանակը պետք է հավասար լինի անվտանգության արդիացման կամ շտկումների փաթեթի քանակին, այլ ոչ ֆիզիկական սարքերի քանակին:
- Անհատական աջակցման ծառայությունները հասանելի են ձեզ աջակցման տեղադրություն(ներ)ում, որը նշված կլինի ձեր Աշխատանքային պատվերի մեջ, եթե աջակցման տեղադրությունը ներառված է ձեր ընդհանուր սարքի/դեպքի հաշվի մեջ:
- Անհատական աջակցության մեջ մտնում է ներառված արտադրանքների միայն անգլերեն տարբերակը, եթե այլ բան համաձայնեցված չէ գրավոր կերպով: Եթե երկու կողմերը

համաձայնվում են ոչ անգլերեն լեզվով աջակցության մասով, աջակցման ժամանակը կարող է երկարացվել՝ թարգմանությունը կատարելու նպատակով (որի համար կարող են գործել թարգմանության վճարներ):

- Անվտանգության արդիացումները, որոնք ներառված են գրանցման ծրագրի վճարի մեջ, սահմանվում են ըստ գնված Անհատական աջակցության ծառայության տեսակի և գրանցված արտադրանքի, ինչպես նկարագրված է ստորև.
  - **Անհատական ստանդարտ աջակցություն.** Տրամադրում է աջակցում այն արտադրանքների համար, որոնց աջակցման ժամկետն ավարտվել է *մինչև* 2010 թ.-ի հունվարի 1-ը, և ներառում է արդիացումներ անվտանգության խոցելի տեղերի համար, որոնք սահմանվել են Microsoft-ի Անվտանգության արձագանքման կենտրոնի (MSRC) կողմից որպես Կրիտիկական կամ Կարևոր:
  - **Անհատական ստանդարտ աջակցություն.** Տրամադրում է աջակցում այն արտադրանքների համար, որոնց աջակցման ժամկետն ավարտվել է 2010 թ.-ի հունվարի 1-ից *հետո*, և տրամադրում է արդիացումներ անվտանգության խոցելի տեղերի համար, որոնք սահմանվել են Microsoft-ի Անվտանգության արձագանքման կենտրոնի (MSRC) կողմից որպես Կրիտիկական: Լրացուցիչ վճարի դիմաց դուք կարող եք գնել անվտանգության արդիացումներ այն խոցելի խնդիրների համար, որոնք MSRC-ի կողմից գնահատվել են որպես Կարևոր:
  - **Անհատական հիմնական աջակցություն.** Հնարավորություն է տալիս գնել անվտանգության արդիացումներ, որոնք MSRC-ի կողմից գնահատվել են որպես Կրիտիկական՝ ամեն մի արդիացման, ամեն մի սարքի համար լրացուցիչ վճարի դիմաց: Որպես Կարևոր գնահատված Անվտանգության արդիացումները առկա չեն:
- Մեկ եռամսյակը՝ Անհատական աջակցման համար նվազագույն ժամկետն է: Հաճախորդները կարող են հրաժարվել Անհատական աջակցումից ըստ եռամսյակի՝ ծանուցելով այդ մասին նախապես՝ հաջորդ վճարման ամսաթվից 14 օր առաջ:
- Կարող է տրամադրվել նաև ոչ անվտանգության շտկումների փաթեթ (օր. ժամային գոտու կամ Ամառային ժամանակի հետ կապված խնդիրների դեպքում) լրացուցիչ վճարի դիմաց:
- Դուք կարող եք դիմել ձեր կողմից նշված անվանական կոնտակտային անձանց համար անվտանգության արդիացումներին և ոչ անվտանգության շտկումների փաթեթին (առկայության դեպքում) մատչում ստանալու համար: Դուք համաձայնում եք տեղեկացնել մեզ այդ նշված կոնտակտային անձանց հետ կատարված փոփոխությունների դեպքում: Անվտանգության արդիացումները և շտկումների փաթեթը առանց մեր հաստուկ գրավոր համաձայնության չեն կարող տրամադրվել ձեզ հետ չփոխկապակցված երրորդ կողմերին:
- Անհատական աջակցության մեջ չի մտնում լրացուցիչ յուրահատկությունների, գործառնության կամ դիզայնի փոփոխության համար դիմելը կամ երաշխիքի աջակցումը:
- Թեև մենք առևտրային տեսանկյունից ողջամիտ ջանքեր ենք կիրառում շտկումների փաթեթի համար կատարած ձեր հարցումներին պատասխանելու համար, դուք կընդունեք, որ կարող են լինել դեպքեր, որտեղ հնարավոր չի լինի ստեղծել կամ տրամադրել անվտանգության արդիացումը կամ ոչ անվտանգության շտկումների փաթեթը, այդ թվում նաև Կրիտիկական և Կարևոր անվտանգության արդիացումները:

- Խնդիրների լուծման աջակցման բոլոր հարցումները կարող են ներկայացվել հեռախոսի միջոցով՝ ձեր կողմից նշանակված կոնտակտային անձանց կողմից:
- Եթե դուք գնում եք Անհատական աջակցումը անմիջապես Microsoft-ից, կարող եք կիրառել ոչ անվտանգության շտկումների փաթեթը և անվտանգությունների արդիացումները կիրառելի Գրանցված արտադրանքի հանդեպ, այդ թվում նաև այն Գրանցված արտադրանքները, որոնք ձեռք են բերվել Microsoft-ի բազմակի լիցենզավորման միջոցով կամ Microsoft-ի ծառայություններ տրամադրողի լիցենզիայի համաձայնագրի միջոցով:
- Այն գործընկերները, որոնք խնամորդում են Windows Server-ը՝ Microsoft-ի Ծառայությունների մատուցման լիցենզիայի համաձայնագրի ծրագրի (SPLA) հիման վրա, չեն կարող գնել Անհատական աջակցումը իրենց կամ իրենց հաճախորդների համար:
- Գործընկերների համար աշխատող տեխնոլոգիաների դեպքում կիրառվում են հետևյալ պայմանները:
  - Microsoft-ի կողմից Անհատական աջակցման ծրագրի շրջանակներում տրամադրված շտկումների փաթեթները և անվտանգության արդիացումները նախատեսված են միայն ներքին օգտագործման համար, եթե չունեք Microsoft-ի Աջակցման ծառայությունների ենթակապալառուի հավելվածը:
  - Անվտանգության արդիացումների և շտկումների փաթեթի համար տրված լիցենզիայի իրավունքները սահմանափակված են Անհատական աջակցման շտկումների փաթեթի վերատարածման ձևում նշված և հետագա վերատարածման համար չնախատեսված անհատական հաճախորդի ներքին աշխատանքային գործողություններով:
  - Հաճախորդների գնացուցակը վերաբերվում է ամեն մի հաճախորդի, որը նշված կլինի Microsoft-ի Աջակցման ծառայությունների ենթակապալառուի հավելվածին կից ներկայացված Անհատական շտկումների փաթեթի վերաբաշխման ձևաթղթում: Ձեր կողմից վճարվելիք գումարը Microsoft-ը հավասարեցնում է բոլոր գների գումարին՝ Անհատական աջակցման շտկումների փաթեթի վերաբաշխման ձևաթղթում նշված ամեն մի անհատական հաճախորդի համար: Այն չի սահմանվում՝ միավորելով ձեր բոլոր հաճախորդներին:
  - Անվտանգության արդիացումների և շտկումների փաթեթի օգտագործումը գործընկերների կողմից՝ իրենց խնամորդվող միջավայրում, նախատեսված է միայն գործընկերոջ անմիջական օգտագործման համար և չի կարող հետագայում տրամադրվել որևէ երրորդ կողմի:

#### 5.4.4 Աջակցության ծառայություններ մատուցելու շրջանակներում ընդլայնված փուլով կարկատաններ տրամադրելու վերաբերյալ

➤ **Շտկումների փաթեթի ընդլայնված աջակցում.** Շտկումների փաթեթի ընդլայնված աջակցումը թույլ է տալիս դիմել ոչ անվտանգության շտկումների համար Microsoft-ի այն ծրագրաշարերի համար, որոնք մտել են «Մպասարկման ընդլայնված փուլ», ինչպես սահմանված է <http://support.microsoft.com/lifecycle> վեբ կայքում:

**Ծառայության նախնական պայմաններ և սահմանափակումներ.**

- Դուք պետք է ունենաք գործող Պրեմիեր համաձայնագիր՝ Խնդիրների լուծման աջակցման բավարար ժամերով՝ Շտկումների փաթեթի համար դիմելու համար: Եթե ձեր Պրեմիեր աջակցման համաձայնագիրը դադարեցված կամ ընդհատված է, Շտկումների փաթեթի ընդլայնված աջակցման ծառայությունը նույնպես կդադարեցվի նույն ամսաթվով:
- Թեև մենք հնարավորինս ողջամիտ ջանքեր ենք կիրառում ոչ անվտանգության շտկումների փաթեթի համար կատարած ձեր հարցումներին պատասխանելու համար, դուք կընդունեք, որ կարող են լինել դեպքեր, որտեղ հնարավոր չի լինի ստեղծել կամ տրամադրել շտկումների փաթեթը:
- Շտկումները նախատեսված են ձեզ մոտ առկա այս կամ այն խնդիրը լուծելու համար, և հետևաբար հետադարձ թեստավորում չեն անցնում:
- Շտկումներ առանց մեր գրավոր համաձայնության չեն կարող տրամադրվել ձեզ հետ չփոխկապակցված երրորդ կողմերին:
- Ձեր Աշխատանքի պատվերի մեջ նշված արտադրանքի ոչ անգլերեն տարբերակների համար շտկումների փաթեթի մատուցման ժամկետը կարող է տարբերվել և կարող են գործել վճարներ թարգմանության համար:
- Խնդիրների լուծման աջակցման ժամերը պետք է նշված լինեն ձեր Աշխատանքի պատվերի մեջ՝ շտկումների փաթեթի համար դիմելիս:
- Մենք չենք տրամադրի հավելված յուրահատկություններ, գործառնություն, արդիացումներ կամ դիզայնի փոփոխություններ: Մենք միայն կլուծենք գրանցված արտադրանքի խնդիրները, որոնց պատճառով այն խափանվում է, կորցնում է տվյալներ կամ այլ կերպ էապես տարբերվում է արտադրանքի փաստաթղթերում ներկայացված գործառնությունից:

**5.4.5 Պրեմիեր եզրափակիչ**

🔗 **Պրեմիեր եզրափակիչ.** Փոփոխում է ծառայությունները, որոնք ներառված են փոխազդող ծառայությունների մեջ՝ Խնդիրների լուծման աջակցումը կարիքներին համապատասխան տրամադրելու համար:

**Ծառայության նախնական պայմաններ և սահմանափակումներ.**

- Պրեմիեր եզրափակիչը սահմանափակված է ձեր Աշխատանքի պատվերի մեջ նշված կոնտակտային անձանց քանակով:
- Պրեմիեր եզրափակիչի մեջ գրանցված մնալու համար դուք համաձայնվում եք կիրառել բոլոր ողջամիտ ջանքերը՝ շտկելու բոլոր խնդիրները, որոնք բացահայտված կլինեն ձեր կամ Microsoft-ի կողմից կատարված գնահատումների ընթացքում՝ գնահատման ամփոփումը ստեղծելուց 30 օրվա ընթացքում:
- Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել Պրեմիեր եզրափակիչի ծառայությունների համաձայնագիրը՝ գրավոր ծանուցելով 30 օր առաջ, եթե նրանցից որևէ մեկը թերացել է շտկել խնդիրները, կամ նախնական գրավոր ծանուցումից հետո 60 օրվա ընթացքում:
- Պրեմիեր եզրափակիչի հաճախորդները, ովքեր դադարեցնում են այն ժամկետից շուտ, ստանում են նախասահմանված փոխհատուցում չօգտագործված ծառայությունների

համար, այն պայմանով, որ դադարեցումը տեղի չի ունեցել շտկման աշխատանքների չկատարման հետևանքով:

- Պրեմիեր եզրափակիչը կարող է հասանելի չլինել բոլոր աջակցման տեղադրություններում

#### 5.4.6 Երրորդ մակարդակի աջակցության ծառայություններ

➤ **Երրորդ մակարդակի աջակցության ծառայություններ.** Անմիջական կապ որոշակի արտադրանքի ոլորտում կամ ոլորտներում Microsoft-ի ամենափորձառու մասնագետների հետ, ովքեր արձագանքում են ձեր Աշխատանքի պատվերում նշված Microsoft տեխնոլոգիաների Խնդիրների լուծման հարցումներին:

**Ծառայության նախնական պայմաններ և սահմանափակումներ.**

- Երրորդ մակարդակի աջակցության թիմին ներկայացված խնդիրների լուծման հարցումների համար, կարող են պահանջվել սովորական արտադրանքների աջակցման մասնագետների ռեսուրսները, թեև Երրորդ մակարդակի աջակցության թիմն է կրում առաջնային պատասխանատվությունը հարցումը կատարելու համար:
- Դուք կարող եք Երրորդ մակարդակի աջակցության ժամերը կիրառել ստանդարտ Խնդիրների լուծման աջակցման ծառայությունների համար, սակայն չեք կարող ստանդարտ Խնդիրների լուծման աջակցման ծառայությունների ժամերը կիրառել Երրորդ մակարդակի աջակցության համար:
- Երրորդ մակարդակի աջակցության թիմի աշխատանքային ժամերը և Երրորդ մակարդակի աջակցության ծառայության շուկայական մատչելիությունը կարող է տարբերվել ըստ երկրի: Մանրամասների համար խորհրդակցեք ձեր SDM-ի հետ:
- Այս ծառայության համար հարկավոր է գրանցման վճար, այն ավելացնում է Խնդիրների լուծման աջակցման ժամերը և մատչելի չէ բոլոր աջակցման տեղադրություններում:
- Երրորդ մակարդակի աջակցությունից և Միավորված PRS ժամերից միաժամանակ օգտվելու դեպքում ձեր Երրորդ մակարդակի աջակցության սակագները կարող են հիմնված լինել Միավորված PRS ժամերի ամբողջ քանակի վրա:

### 5.5 Բարելավված լուծումներ

Բարելավված լուծումների փաթեթները տրամադրում են լրացուցիչ աջակցման միջոցներ Microsoft-ի որոշակի արտադրանքի կամ հաճախորդի SS համակարգի համար:

#### 5.5.1 Պրեմիեր, առաքելության համար վճարող

➤ **Պրեմիեր, առաքելության համար վճարող (PMC).** Տրամադրում է աջակցման ավելի բարձր մակարդակ Microsoft-ի արտադրանքների սահմանված կազմի համար, որոնք մաս են կազմում ձեր առաքելության համար վճարող որոշման մեջ, ինչպես նշված է ձեր Աշխատանքի պատվերի մեջ: PMC-ը տրամադրում է աջակցման ծառայությունների անհատականացված ծրագիր, մատչելի է լրացուցիչ վճարի դիմաց և նշված է ձեր Աշխատանքի պատվերի Հավելվածի մեջ:

### 5.6 Տեխնոլոգիաներ՝ կենտրոնացած գործընկերների վրա

➤ **Տեխնոլոգիաներ՝ կենտրոնացած գործընկերների վրա.** Եթե դուք Microsoft-ի գործընկեր եք, այս տեխնոլոգիան թույլ է տալիս Գործընկերոջ հաճախորդներին օգտվել աջակցման ծառայություններից,

որոնք նկարագրված են Ծառայությունների ենթակապալառուի հավելվածի մեջ: Նման ծառայությունները կմատուցվեն Microsoft-ի կողմից՝ ձեր անունից: Այս ծառայությունը մատչելի է միայն Microsoft-ի գործընկերներին, ովքեր ունեն Microsoft-ի գործող Աջակցման ծառայությունների ենթակապալառուի հավելված: Լրացուցիչ տեղեկությունների համար կապվեք Microsoft-ի ծառայությունների ձեր ներկայացուցիչների հետ:

## 5.7 Աջակցության համընդհանուր լուծումներ

➤ **Աջակցության համընդհանուր լուծումներ.** Պրեմիեր համընդհանուր միջոցով դուք կարող եք ստանալ Պրեմիեր աջակցություն մեկ կամ մի քանի Աջակցման տեղադրություններում: Պրեմիեր համընդհանուրը հասանելի է որպես Փոփոխելի փաթեթի մի մաս՝ ինչպես ներկայացված է ստորև:

- **Խնամորդ.** Սա այն աջակցման տեղադրությունն է, որտեղ դուք Պրեմիեր համընդհանուր ծառայությունների համար պայմանագիր եք կնքել Microsoft-ի հետ: Եթե այլ կերպ նշված չէ, սա լինելու է ձեր Նշանակված կամ Հատկացված աջակցման ծառայությունների մատուցման մենեջերի աջակցման տեղադրությունը:
- **Մարքեթինգի և վաճառքի բլոկ.** Սա բացի Խնամորդի աջակցման տեղադրությունից այն աջակցման տեղադրությունն է, որը նշված է ձեր Ձեռնարկության ծառայությունների Աշխատանքի պատվերի մեջ՝ ծառայություններ ստանալու համար:

Կանխարգելիչ ծառայությունները, Փոխազդող ծառայությունները, Ծառայությունների մատուցման կառավարումը և Բարելավված ծառայությունները մատուցվում են սույն ծառայությունների նկարագրի մեջ ներկայացված ձևով՝ հետևյալ փոփոխություններով:

- **Կանխարգելիչ ծառայություններ.** Կանխարգելիչ ծառայությունները կարող եք փոխանցել մեկ նշանակված աջակցման տեղադրությունից մյուսը, որը նշված կլինի ձեր Աշխատանքի պատվեր(ներ)ի մեջ:
- **Ռեակտիվ ծառայություններ.** Դուք կարող եք նախընտրել գնել Խնդիրների լուծման համար աջակցության (PRS) ձեր բոլոր ժամերը ձեր Խնամորդի աջակցման տեղադրությունում: Սա մտնում է Խնդիրների լուծման միավորված ժամերի մեջ: PRS ժամերը կարող եք փոխանցել մեկ նշանակված աջակցման տեղադրությունից մյուսը, որը նշված կլինի ձեր Աշխատանքի պատվեր(ներ)ի մեջ:

Ձեր չնշված աջակցման տեղադրության/տեղադրությունների անձնակազմին կարող եք թույլատրել մասնակցել հեռակա Կանխարգելիչ և Խնդիրների լուծման աջակցման ծառայություններում, որոնք նշված են եղել որոշակի տեղադրության համար: Նման մասնակցությունները կթույլատրվեն հնարավորության դեպքում:

**Ծառայությունների մատուցման մենեջեր.** Ձեր Համընդհանուր ծառայության մատուցման մենեջերը կամ Նշանակված կամ Հատկացված ռեսուրս է, ով տրամադրելու է ձեզ ծառայության Ընդլայնված մակարդակ, որը սահմանված է Բաժին 5.3.2-ում: Բացի այդ, այս ռեսուրսը կորողինացնելու է միջերկրային ծառայությունները և վերահսկելու է հաշվետվությունները:

**Ծառայության նախնական պայմաններ և սահմանափակումներ.**

- **Սակագների տարբերությունները.** Կանխարգելիչ և Խնդիրների լուծման համար աջակցության ծառայությունների սակագները կարող են տարբեր լինել՝ ըստ երկրների: Microsoft-ն իրավունք է վերապահում սակագների տարբերությունների համար հաշիվ ներկայացնել ձեզ, կամ ժամավճարով ծառայությունների դեպքում՝ հարմարեցնել ժամերն ըստ երկրների միջև գործող սակագնային տարբերությունների:

- Անհրաժեշտությունից ելնելով՝ Office 365-ի և Microsoft Azure-ի բաժանորդագրումների կողմից տրամադրված PRS-ը մատչելի է բոլոր նշված աջակցման տեղադրությունների համար:
- **Համախմբված հաշիվների ներկայացում.** Եթե այլ կերպ նշված չէ, դուք ստանալու եք մեկ հաշիվ՝ ձեր Աշխատանքի պատվերի մեջ նշված բոլոր աջակցման տեղադրությունների վճարների համար: Հաշիվը կուղարկվի ձեր կողմից նշված աջակցման ծառայություն: Հարկերը (առկայության դեպքում) կսահմանվեն ըստ ձեր ծառայությունների մատուցման աջակցման տեղադրության և կավելացվեն ձեր հաշվի մեջ՝ ինչպես հարկն է: Այլ լրացուցիչ հարկերի համար միայն դուք եք պատասխանատու:
- Կարող են գործել սահմանափակումներ կամ փոփոխություններ, որոնք մատչելի են աջակցման տեղադրության կողմից:
- **Բացառություններ Համախմբված հաշիվների ներկայացման մեջ.** Հնդկաստանի Հանրապետությունում, Ճապոնիայում, Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում, Չինաստանի Հանրապետությունում (Թայվան) և Կորեայի Հանրապետությունում մատուցած ծառայություններից յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին Ձեռնարկության ծառայությունների Աշխատանքի պատվեր, որտեղ նշված կլինեն այն ծառայությունները, որոնք մատուցվում են նշված աջակցման տեղադրությունում: Ծառայությունները և հաշիվը կուղարկվեն տվյալ երկրում ձեր աջակցման տեղադրություն և հաշվում կներառվեն նաև տեղի կիրառելի հարկերը:

## 5.8 Լրացուցիչ դրույթներ և պայմաններ

Բոլոր Պրեմիեր ծառայությունները մատուցվում են ստորև թվարկված նախապայմաններով և վերապահումներով.

- Հնարավոր է, որ մենք ձեզանից պահանջենք իրականացնել խնդիրների հայտնաբերման և լուծման աշխատանքներ: Դրանք կարող են ներառել ցանցերի հետազոտումը, սխալների վերաբերյալ ուղերձների կորզումը, կազմաձևի մասին տեղեկությունների հավաքագրումը, արտադրանքների կազմաձևման փոփոխումը, ծրագրաշարի նոր տարբերակների կամ նոր բաղադրիչների տեղադրումը կամ գործընթացների փոփոխումը:
- Դուք պատասխանատու եք ձեր տվյալների պահուստավորման և աղետալի խափանումների հետևանքով կորած կամ փոփոխված նիշքերը վերականգնելու համար: Դուք պատասխանատու եք նաև ձեր ծրագրաշարի և տվյալների ամբողջականությունն ու անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ ընթացակարգերի իրականացման համար:
- Բոլոր ծառայությունները կմատուցվեն հեռակա կարգով՝ ձեր Աշխատանքի պատվերի մեջ նշված երկրում, եթե այլ բան գրավոր կերպով նախատեսված չէ: Եթե տեղադրությունները նույնացված են մեկից ավելի երկրում, ապա ծառայությունները կստանաք նշանակված Համընդհանուր ծառայությունների գծով մենեջերի կողմից և կարող է ներառել տեղային Ծառայությունների գծով պատասխանատու անձ՝ յուրաքանչյուր համընդհանուր ծառայությունների տեղադրությունում: Աշխատանքի պատվերի մեջ կնկարագրվեն մատուցվելիք ծառայությունները՝ ձեր կողմից նշված համընդհանուր աջակցման տեղադրություններից յուրաքանչյուրում:
- Եթե դեպքի վայր կատարվող այցերը փոխհամաձայնեցված են և դրանց համար կանխավճար չի մուծվել, մենք ձեզ կներկայացնենք հաշիվ ճանապարհորդության,



օրապահիկի և գիշերավարձի ողջամիտ ծախսերի համար կամ, ձեր խնդրանքով, կհանենք Խնդիրների լուծման համար աջակցության ժամերի համապատասխան քանակ՝ կատարված ծախսերը փոխհատուցելու նպատակով:

- Բոլոր ծառայությունները կմատուցվեն այն լեզվով, որով խոսում են Microsoft-ի Ծառայությունների մատուցման տեղադրությունում կամ անգլերենով, եթե այլ գրավոր համաձայնություն չկա:
- Մենք կտրամադրենք աջակցության ծառայություններ բոլոր տարբերակներով շուկայում հասանելի Microsoft-ի արտադրանքների համար, որոնք նշված են Microsoft-ի կողմից ժամանակ առ ժամանակ հրապարակվող «Արտադրանքների ցուցակում»՝ <http://microsoft.com/licensing/contracts> հասցեով (կամ Microsoft-ի կողմից նշված մեկ այլ հասցեով), եթե այլ բան սահմանված չէ Աշխատանքի պատվերի, սույն Ծառայությունների նկարագրի Հավելվածում կամ դա հատուկ բացառված չէ Microsoft-ի Premier Online վեբ կայքում՝ <http://premier.microsoft.com>: Անվտանգության հետ կապ չունեցող շտկումների փաթեթներ չեն տրամադրվի Microsoft-ի այն արտադրանքների համար, որոնք մտել են Սպասարկման ընդլայնված փուլ, ինչպես սահմանված է <http://support.microsoft.com/lifecycle> վեբ կայքում, եթե դուք նման աջակցությունը ձեռք չեք բերել որպես Շտկումների փաթեթի ընդլայնված աջակցում, որը նկարագրված է սույն Ծառայությունների նկարագրում կամ ձեր Աշխատանքի պատվերին կցված Հավելվածում:
- Արտադրանքի նախնական և բետա տարբերակների համար աջակցության ծառայություններ չեն մատուցվում, եթե կից ներկայացվող Հավելվածում այլ բան նշված չէ:
- Բոլոր ծառայությունները, ներառյալ Աջակցման Աշխատանքի պատվերի գործողության ժամկետի ընթացքում գնված հավելյալ ծառայությունները անվավեր կճանաչվեն, եթե դրանք չօգտագործվեն կիրառելի Աշխատանքի պատվերի ժամկետի ընթացքում:
- Եթե դուք պատվիրեք որևէ տեսակի ծառայություն և ցանկանաք փոխարինել այն մեկ այլ տեսակով, ապա դուք կարող եք կիրառել համարժեք արժեք այլընտրանքային ծառայության նկատմամբ՝ դրա մատչելիության և ձեր SDM-ի հետ համաձայնեցնելու պայմանով:
- Ծառայությունների պլանավորումը կախված է ռեսուրսների առկայությունից, իսկ սեմինարները կարող են չեղարկվել, եթե չհապատասխանեք գրանցման նվազագույն մակարդակին:
- Մենք կարող ենք մուտք գործել ձեր համակարգ հեռակա կապակցման միջոցով՝ ձեր խնդրանքով խնդիրները վերլուծելու համար: Մեր աշխատակիցները մուտք կգործեն միայն ձեր կողմից լիազորված համակարգեր: Հեռակա կապակցման միջոցով օգնություն ցուցաբերելու համար դուք պետք է մեզ տրամադրեք համապատասխան մուտքի իրավունք և անհրաժեշտ սարքավորումներ:
- Որոշ ծառայությունների համար կարող է պահանջվել պահեստավորել, մշակել և մատչել ձեր հաճախորդի տվյալները: Այս ամենն անելու համար մենք կիրառում ենք Microsoft-ի կողմից հաստատված տեխնոլոգիաներ, որոնք համապատասխանում են մեր՝ տվյալների պաշտպանության դրույթներին ու ընթացակարգերին: Եթե դուք ցանկանաք, որպեսզի մենք օգտագործենք տեխնոլոգիաներ, որոնք հաստատված չեն Microsoft-ի կողմից, դուք պետք է հասկանաք և ընդունեք, որ բացառապես դուք եք պատասխանատու լինելու ձեր հաճախորդի տվյալների ամբողջականության և անվտանգության համար և, որ Microsoft-ը

ոչ մի պատասխանատվություն չի կրում Microsoft-ի կողմից չհաստատված տեխնոլոգիաների կիրառման համար:

- Եթե դուք պահանջեք չեղարկել նախկինում ծրագրավորված ծառայությունը, ապա Microsoft-ը կարող է հանել տվյալ աշխատանքների գնի մինչև 100 տոկոսը կազմող չեղարկման գումար այն դեպքերում, երբ չեղարկման կամ կատարման ժամկետների տեղափոխման մասին ծանուցումն արվել է այդ աշխատանքների մեկնարկի ամսաթվից 14-ից քիչ օր առաջ:
- Գնման, Ծրագրաշարի որակի ապահովման առավելության միջադեպերի փոխարկման միջոցով ձեր աջակցման փաթեթին լրացուցիչ ծառայություններ ավելացնելիս մենք կարող ենք պահանջել ներառել ծառայության մատուցման կառավարման համապատասխան մակարդակ՝ մատուցումն արագացնելու համար:
- Ծրագրաշարի որակի ապահովման առավելության միջադեպերը կարող են միայն փոխարինվել Խնդիրների լուծման աջակցման կամ Երրորդ մակարդակի աջակցման ժամերով: Ձեր երկրում հնարավոր է մատչելի լինեն լրացուցիչ ծառայություններ. խնդրում ենք մանրամասների համար կապվել ձեր SDM-ի հետ: 30 օր հետո մենք իրավունք ունենք հաշիվ ներկայացնել ձեզ Ծրագրաշարի որակի ապահովման առավելության դեպքերի պակասորդին համարժեք գումարի չափով, որը դուք պարտավորվում եք վճարել Առաջնակարգ աջակցության ծառայություններին անցնելու համար, ինչպես նշված է ձեր Աշխատանքի պատվերում:
- Աջակցման ծառայությունները սահմանափակված են խորհրդատվությամբ և ցուցումներով, որոնք առնչվում են ձեր կամ Microsoft-ի ունեցած կողմի հետ:
- Դուք համաձայնում եք, որ միակ ոչ Microsoft-ի կողմ, որին դուք մեզ մատչում եք տրամադրում, ձեր ունեցած կողմն է:
- Աջակցումը չի տրամադրում ոչ մի տեսակի կոդ, բացի նմուշ կոդից:
- Գնված ծառայությունների համար պահանջվում են հենքի նվազագույն պայմաններ:

Համապատասխան Հավելվածներում կարող են սահմանվել լրացուցիչ նախապայմաններ ու վերապահումներ:

## 5.9 Ձեր պարտավորությունները

Պրեմիեր աջակցության առավելությունների լավարկումը պայմանավորված է ձեր կողմից ստորև նշված պարտավորությունների կատարմամբ, որոնք սահմանվում են ի լրումն ցանկացած կիրառելի Հավելվածով նախատեսված պարտավորությունների: Հետևյալ պարտավորությունները չկատարելու դեպքում ծառայությունների մատուցումը կարող է հետաձգվել:

- Դուք կարող եք անվանապես նշել կոնտակտային անձանց ձեր Աշխատանքի պատվերի մեջ, որոնցից մեկը կլինի ձեր Հաճախորդների աջակցության մենեջերը (CSM): CSM-ը պատասխանատու է ձեր թիմի անդամներին առաջնորդելու համար և կառավարելու է աջակցության ծառայությունների պատվերներ մեզ ներկայացնելու հետ առնչվող ձեր գործողությունները և ներքին գործընթացները: Յուրաքանչյուր կոնտակտային տրամադրվելու է անհատական հաշվի համար՝ Microsoft-ի Premier Online վեբ կայք մուտք գործելու, աջակցության պատվերներ ներկայացնելու և ձեր Microsoft-ի ծառայությունների մատուցման թիմի հետ հաղորդակցվելու նպատակով: Ձեր առցանց ծառայությունների վարիչները նույնպես կարող են ներկայացնել առցանց ծառայությունների աջակցման

հարցումները առցանց ծառայությունների աջակցման համար նախատեսված կայքէջերի միջոցով: Անվանական կոնտակտներից բացի դուք կարող եք նույնացնել նաև խմբակային կոնտակտների երկու տեսակ, ինչպես նկարագրված է ստորև.

- Կոնտակտների մեկ տեսակին կտրամադրվի համոզագործման համար նախատեսված հաշվի ID, որի միջոցով կարելի է մուտք գործել Microsoft-ի Premier Online վեբ կայք, ստանալ տեղեկություններ այնտեղից, ինչպես նաև պատվիրել աջակցության ծառայություններ:
- Կոնտակտների մյուս տեսակին կտրամադրվի համոզագործման համար նախատեսված հաշվի ID, որի միջոցով կարելի է մուտք գործել Microsoft-ի Premier Online վեբ կայք՝ միայն տեղեկություններ ստանալու նպատակով:
- Դուք համաձայնում եք տեղեկացնել մեզ ձեր Աշխատանքի պատվերում նշված կոնտակտային անձանց հետ կատարված փոփոխությունների դեպքում:
- Դուք համաձայնում եք համագործակցել մեզ հետ՝ ձեր կողմից գնված ծառայությունների մակարդակի հիման վրա ծառայությունների օգտագործումը պլանավորելու նպատակով:
- Դուք պետք է ներկայացնեք կանխարգելիչ ծառայությունների հարցումներ՝ բոլոր անհրաժեշտ/կիրառելի տվյալների հետ մեկտեղ, համապատասխան Աշխատանքի պատվերի գործողության ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 60 օր առաջ:
- Դուք համաձայնում եք հնարավորության սահմաններում պատասխանել ծառայությունների վերաբերյալ հաճախորդների բավարարվածությունը ստուգելու հարցումներին, որոնք մենք ժամանակ առ ժամանակ կարող ենք ձեզ ուղարկել:
- Դուք համաձայնում եք մեր ծառայության մատուցման թիմին (ովքեր պետք է տեղում գտնվեն) տրամադրել անհրաժեշտ հեռախոսային և գերարագ Համացանցի մատչում, ձեր ներքին համակարգերի մուտքի իրավունք և ախտորոշման գործիքներ:
- Դուք պատասխանատու եք ձեր աշխատակիցների կամ կապալառուների կողմից կատարված ճանապարհորդության և բոլոր այլ ծախսերի համար:
- Հնարավոր է, ունենաք ծառայության հետ կապված այլ պարտականություններ Ծառայության մատուցման կառավարիչի հանդեպ:

## 6 Փաստաթղթի փոփոխություններ

Այս տարբերակում զետեղված նյութերում կատարված հավելումները, փոփոխությունները և ջնջումները հետևյալն են.

### **Հունվար, 2017 թ.**

Այս փաստաթղթում զետեղված են հավելումներ և փոփոխություններ, որոնք վերանայում են ծառայությունների նկարագրությունները:

Հավելումներ.

- 2: Microsoft պրոֆեսիոնալ ծառայություններ – Ավելացվել է այս բաժինը, որտեղ սահմանված են մատչելի Պրոֆեսիոնալ ծառայությունների անվանակարգերը
- 3: Ծառայություններ՝ նախատեսված ողջ ձեռնարկության համար – Այս բաժինն ավելացվել է այն ծառայությունների համար, որոնք կարող են վաճառվել MCS կամ Premier առաջարկների շրջանակում
  - 3.1: Ինչպես գնել
  - 3.2: Պլանավորման ծառայություններ
  - 3.3: Լավարկման ծառայություններ
- 4: Խորհրդատվական ծառայություններ
  - Ավելացվել է ամփոփման նկարագրություն
  - 4.2: Անհատական խորհրդատվական ծառայություններ – ավելացվել են հարմարեցվող ծառայություններ
  - 4.3: Խորհրդատվական ծառայությունների փաթեթ – Ավելացվել է պլանավորման ծառայությունների բաժինը
  - 4.3: Խորհրդատվական ծառայությունների փաթեթ – Ավելացվել է իրագործման ծառայությունների բաժինը
- 5: Աջակցման ծառայություններ
  - Ավելացվել է ամփոփման նկարագրություն
  - 5.3.1: Կանխարգելիչ ծառայությունների փաթեթ – Ավելացվել է իրագործման ծառայությունների բաժինը
  - 5.3.1: Կանխարգելիչ ծառայություններ – Ավելացվել է տեխնիկական սպասարկման ծառայությունների բաժինը
  - 5.3.1: Կանխարգելիչ ծառայություններ – Ավելացվել է լավարկման ծառայությունների բաժինը

Փոփոխություններ.

- 3.3: Յուրացման ծառայությունները Աջակցման ծառայությունների Գործառնական ծառայություններ բաժնից տեղափոխվել են Լավարկման ծառայությունների տակ

- 4.5: Հրաժարումներ և սահմանափակումներ – Պարագրաֆ 1 և 5 – «Խորհրդատվական ծառայությունների Ձեռնարկության ռազմավարության ծրագիր» բաժինը փոխարինվել է Թվային խորհրդատվական ծառայություններով
- 5.3.1: Կանխարգելիչ ծառայություններ
  - Փոփոխվել է Պրակտիկ դասընթացների նկարագրությունը

#### Ջնջումներ.

- 4.5: Հրաժարումներ և սահմանափակումներ – Հեռացվել են պարագրաֆ 2-ը և 4-ը:
- 5.1: Մշակողների համար փաթեթները հեռացվել են Ինչպես գնել բաժնի Ծառայություն աղյուսակից:
- 5.3.1: Կանխարգելիչ ծառայություններ – Գնահատման ծառայությունները փոխարինվել են Տեխնիկական սպասարկման ծառայություններով
- 5.3.1: Կանխարգելիչ ծառայություններ – Հեռացվել են Գործառնական ծառայությունները

#### Հուլիս, 2016 թ.

#### Հավելումներ.

- 2.2: Անհատական խորհրդատվական ծառայություններ
- 2.3: Փաթեթի մեջ ներառված խորհրդատվական ծառայություններ
- 2.3.1: Թվային խորհրդատվական ծառայությունների ծրագիր
- 3.3.1: Յուրացման ծառայություններ Ծառայության տեսակ
- 3.3.1: Հասկացության հաստատում Ծառայության տեսակ
- 3.3.1: Անվտանգության ծառայություններ Ծառայության տեսակ

#### Փոփոխություններ.

- 2.1: Ինչպես վճարել խորհրդատվական ծառայությունների համար
- 3.2.1: Ողջ ձեռնարկության համար նախատեսված փաթեթների Աշխատանքի պատվերի վերաբերյալ ծանոթագրություններ
- 3.3.1: Գնահատման ծրագրի ծառայության տեսակ
- 3.3.1: Ռիսկի և ընդհանուր մակարդակի գնահատման ծրագիրը որպես Ծառայություն (RAP-ը որպես Ծառայություն) Ծառայության տեսակ լեզու
- 3.3.2: Տեղում կատարվող ծառայությունների մատուցման կառավարման տերմինաբանություն
- 3.3.3: Խնդիրների լուծման աջակցում երրորդ կողմի տեխնոլոգիաների մատակարարների և արտադրանքների համար ընդհանուր աջակցման շրջանակներում
- 3.3.3: Բ կարգի լրջության աստիճանի 7 օրյա, 24 ժամյա աջակցման վայրի հստակեցում
- 3.4.3: Անհատական աջակցման գրանցման ծրագրի վճար լեզվի արդիացում
- 3.4.5: Պրեմիեր եզրափակիչ Աշխատանքի պատվերի վերաբերյալ ծանոթագրություններ

- 3.9: Ծրագրաշարի որակի ապահովման առավելության դեպքի փոխարկման պահանջներ
- 3.9: Ամպային աջակցման համար հարցման ներկայացում աջակցման կայքէջ լեզու

Ջնջումներ.

- 2.3.1: Ձեռնարկության ռազմավարության ծրագիր
- 3.3.1: Անվտանգության գնահատման ծրագիր Ծառայության տեսակ

### **Հունվար, 2016 թ.**

Հավելումներ.

- 3.3.1: Գնահատման ծրագրի ծառայության տեսակ
- 3.4.2: Աջակցման տեղադրության հստակեցում Աջակցության համար նախատեսված ինժեներական ծառայությունների համար
- 3.4.3 Աջակցման տեղադրության հստակեցում Անհատական աջակցության ծառայությունների համար
- 3.4.3: Ինչպես դիմել անվանական կոնտակտային անձանց համար անվտանգության արդիացումներին և շտկումների փաթեթին մատչում ստանալու համար:
- 3.4.5: Աջակցման տեղադրության հստակեցում Պրեմիեր եզրափակիչի համար
- 3.4.6: Աջակցման տեղադրության հստակեցում Երրորդ մակարդակի աջակցության ծառայությունների համար
- 3.7: Աջակցության համընդհանուր լուծումներ
- 3.8: Հաճախորդի տվյալների պահեստավորումը, մշակումը և մատչումը:
- 3.9: Ծանուցում Աշխատանքի պատվերում նշված կոնտակտային անձանց հետ կատարված փոփոխությունների դեպքում:

Փոփոխություններ.

- 3.3.2: Ծառայությունների մատուցման մենեջերի պահանջների հստակեցում: Եվ Գործադիրների մշակման կառավարիչի (ADM) լեզվի վերանայում:

### **Հոկտեմբեր, 2015 թ.**

Հավելումներ.

- 2.3.2: Նոր մոդուլներ – Նախագծի պորտֆոլիոյի օպտիմալացում, Գործադիրի պորտֆոլիոյի օպտիմալացում
- 3.3.2: Գործադիրների մշակման կառավարիչի (ADM) ֆունկցիաների նկարագրությունը Ծառայության մատուցման կառավարման ներքո
- 3.7: Պարագրաֆ 18. Հենքի պահանջների լեզու

Փոփոխություններ.

- 2.1: Ձեռնարկության ռազմավարության ծրագրի և Աշխատանքին պատրաստ ամպային տեխնոլոգիաների աղյուսակի նկարագրության արդիացումներ
- 2.2.2: ESP Աշխատանքին պատրաստ ամպային տեխնոլոգիաների ներգրավվածության աղյուսակ - փոխվել են մոտեցման փուլերը
- 2.3: Ձեռնարկության ռազմավարության ծրագիր և ծառայությունների նկարագիր, փոխվել է նկարագիրը
- 2.3.2: Մոդուլի նկարագրի փոփոխություններ.
  - Արժեքների բացահայտման պարապմունքներ
  - Կառուցվածքային տարբերակներ և խորհուրդներ
  - Արժեքների պլանավորում
  - Նախագծի տնտեսական հիմնավորման մշակում
  - Ընդունման և փոփոխությունների կառավարում
  - Արժեքների կառավարում
  - Ծրագրի կառավարում, ռիսկերի և համապատասխանելիության (GRC) կառավարում
- 3.2.1: Արագացված փաթեթների նկարագիրը տեղափոխվել է Բաժին 3.4
- 3.3.1: Անցանց գնահատում. ավելացվել է տարբերակ ծառայությունների հեռակա մատուցման համար
- 3.3.1: Ադապտացիայի արագացուցիչ. ավելացվել է տարբերակ նորացման օգնության համար
- 3.3.3 Խնդիրների լուծման համար աջակցություն (PRS). կարգաբերվել է լեզուն՝ արտակարգ իրավիճակների աստիճանը որոշելու համար
- 3.4.3: Անհատական աջակցում. արդիացվել են միգրացիոն պլանի պահանջները

Ջնջումներ.

- 3.3.2: Արտադրանքի ֆունկցիոնալի բաժին - Առցանց ծառայություններ՝ ներկառուցված SDM ծառայությունների բաժինների մեջ

## **Հուլիս, 2015 թ.**

Հավելումներ.

- 2.1: ESP Աշխատանքին պատրաստ ամպային տեխնոլոգիաների ներգրավման տեսակներ
- 2.2.2: ESP Աշխատանքին պատրաստ ամպային տեխնոլոգիաների փաթեթներ
- 2.3: ESP և ծառայությունների նկարագիր. սահմանված մոտեցում աշխատանքին պատրաստ տեխնոլոգիաների ներգրավման մոդուլների համար
- 3.3.2: Միջուկային SDM ծառայություններ. «Տեղեկատվական ծառայություններ»
- 3.8: Հաճախորդի նոր պարտավորություններ

Փոփոխություններ.

- 2.3.2: Արդիացվել է ձեռնարկության ռազմավարության ծառայության մոդուլների նկարագիրը

- 2.4: Խորհրդատվական ծառայությունների համար նշված ESP
- 3.1: Բարելավված տեխնոլոգիաների փաթեթներ. ավելացվել է «մատչելի է կազմաձևելի փաթեթով» բաժինը
- 3.1: Մշակողների համար փաթեթների նկարագրություն
- 3.3.1: Գնահատման ծառայություններ. - RAP-ը որպես հավելյալ ծառայություն, արդյունաբերական ծառայություններ. POP
- 3.3.2: Ծառայությունների մատուցման կառավարում - ավելացվել է ADM
- 3.3.2: Բոլոր Առցանց աջակցումով SDM աշխատանքների հղումները տեղափոխվել են առանձին բաժին՝ SDM Արտադրանքի ֆունկցիոնալից հետո, հեռացվել է MIRP հղումը, ավելացվել է ծառայության վերանայման լեզու
- 3.4.2: Անհատական աջակցում - արդիացվել են նախապայմաններն ու սահմանափակումները, ավելացվել են տեղեկություններ գործընկերների համար նախատեսված տեխնոլոգիաների մասին

#### Ջնջումներ.

- 2.3.2: Ձեռնարկության ռազմավարության ծառայությունների մոդուլներ
  - Շարժական աշխատակազմի ստեղծում
  - Տվյալների կենտրոնի արդիականացում
  - Տվյալների հենքի արդիականացում
- 3.3.1: Գնահատման ծառայություններ - Ռիսկի և ընդհանուր վիճակի գնահատման ծրագիր (RAP)
- 3.3.3 Azure-ի և O365-ի հղումներ

#### Հունվար, 2015 թ.

##### Հավելումներ.

- 3.5: Տեխնոլոգիաներ՝ կենտրոնացած գործընկերների վրա

##### Փոփոխություններ.

- 3.4: Անհատական աջակցության ծառայություններ

##### Ջնջումներ.

- 3.6: MSDN տեխնիկական աջակցման միջադեպեր, որոնք մատչելի են որպես հնարավոր փոխանցման աղբյուր

#### Մեպտեմբեր, 2014 թ.

##### Հավելումներ.

- 2.3.2: Մոդուլներ
  - Շարժական աշխատակազմի ստեղծում



- Տվյալների կենտրոնի արդիականացում
- Տվյալների հենքի արդիականացում
- 2.4: Տեղեկություններ աշխատավայր կատարվող այցելությունների մասին
- 3.1: Ավելացվել են Փաթեթներ մշակողների համար
- 3.2.1: Արագացված փաթեթ
- 3.3.1: Ադապտացիայի արագացուցիչը որպես Գործառնական ծառայություն
- 3.3.2: Առցանց ընձեռված ծառայությունների մատուցման կառավարում
- 3.3.3: Ըստ անհրաժեշտության Խնդիրների լուծման աջակցում առցանց ծառայությունների համար

#### Փոփոխություններ.

- 2.0: Ձեռնարկության ճարտարապետը անվանափոխվել և դարձել է Microsoft-ի ճարտարապետ
- 2.3.2: Մոդուլի նկարագրի արդիացումներ
- 3.3.1: Գործընթացի բարելավումները և Կայունացման ծառայությունները միավորվել են Գործառնական ծառայությունների մեջ
- 3.3.1: Անհատական կանխարգելիչ ծառայությունները արդիացվել են օգտագործման գործառնական ծառայությունների
- 3.3.2: Կանխարգելիչ ծառայությունների հասունության վերլուծությունը փոխվել է Նախնական գնահատման
- 3.4.4: Պրեմիեր եզրափակիչի սահմանման մեջ կատարված փոփոխություններ
- 3.6: Լրացուցիչ դրույթներին և պայմաններին ավելացվել են աղբյուրի կողմի պայմանները
- 3.6: MSDN տեխնիկական աջակցման միջադեպեր, որոնք մատչելի են որպես հնարավոր փոխանցման աղբյուր

#### Ջնջումներ.

- 3.2.2: Պրեմիեր աջակցություն Azure-ի համար (այժմ արդեն ընդգրկված է Առցանց ընձեռնված SDM-ի մեջ)
- 3.4.4: Մշակողների համար Պրեմիեր աջակցումը այժմ սահմանված է որպես ծառայության փաթեթ
- 3.5.2: Պրեմիեր Azure-ի արագ արձագանք

#### Հուլիս, 2014 թ.

#### Հավելումներ.

- 3.3.1: Ռիսկի և ընդհանուր վիճակի գնահատում որպես Ծառայություն պլյուս
- 3.3.1: Անցանց գնահատում

#### Փոփոխություններ.

- 3.2.1: Պրեմիեր միջուկի սահմանումը արդիացվել է նախաձանցով՝ «20 խնդրի լուծման աջակցման ժամեր»-ը «Մինչև»-ով
- 3.3.1: Կանխարգելիչ մշտադիտարկումը տեղափոխվել է Գնահատման ծառայություններից Գործընթացի բարելավման ծառայություններ (բոլորը Բաժին 3.3.1-ում)
- 3.3.2: Ծառայությունների մատուցման կառավարման սահմանման մեջ ընդգրկվել է «Աջակցության հաշվի մենեջերը (SAM)»
- 3.4.2: Անհատական աջակցության նախապայմանները և եզրահանգումները արդիացվել են՝ ներառելով լրացուցիչ տեղեկություններ պահանջների վերաբերյալ՝ միգրացիոն պլանը տրամադրելու և արդիացնելու համար «Դուք պետք է տրամադրեք և հետևեք միգրացիոն պլանին (ցույց տալով ամսաթվերը, սարքերի քանակը և հիմնական փուլերը)՝ աջակցվող արտադրանքի մակարդակին անցնելու համար»
- 3.5.2: «Պրեմիեր աջակցություն Windows Azure-ի համար»-ը վերանվանվել է «Պրեմիեր աջակցություն Azure-ի համար»-ի և արտադրանքների նմուշների ցանկը հեռացվել և ավելացվել է «ամպի վրա հիմնված մշակման կազմում»
- 3.6: «Ծառայությունների պլանավորումը կախված է ռեսուրսների առկայությունից»-ում ավելացվել է, «իսկ սեմինարները կարող են չեղարկվել, եթե գրանցումների նվազագույն մակարդակը չապահովվի»:
- 3.6: Չեղարկման դրույթը փոխվել է 30 օրվա ծանուցումից (Միացյալ Նահանգներից դուրս) 14 օրվա ծանուցման

Ձևումներ.

- Վերականգնիչ ծառայություններ (նախորդ հղման Բաժին 3.3.1)

### **Հոկտեմբեր, 2013 թ.**

Փոփոխություններ.

- 2.3.2: Զեռնարկության համաձայնագրի արժեքների զարգացման պլանը վերանվանվել է Տեխնոլոգիաների արժեքների զարգացման պլանի

Ձևումներ.

- Զեռնարկության ռազմավարության ֆորում (նախորդ հղման Բաժին 2.21 և Բաժին 2.31)
- Ռազմավարության հրահանգներ (նախորդ հղումների Բաժին 2.21 և Բաժին 2.31)

© 2016 Microsoft Corporation: Բոլոր իրավունքները պահպանված են: Այս նյութերի ցանկացած օգտագործում կամ տարածում՝ առանց Microsoft Corp.-ի բացահայտ լիազորման, խստիվ արգելվում է: Microsoft-ը և Windows-ը հանդիսանում են Microsoft Corporation-ի գրանցված ապրանքանշանները կամ Միացյալ Նահանգներում և/կամ այլ երկրներում:

Սույն փաստաթղթում հիշատակված փաստացի ընկերությունների և արտադրանքների անունները կարող են հանդիսանալ իրենց համապատասխան սեփականատերերի ապրանքանշանները: